# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 դեկտեմբերի 2020 թվականի N318Ա**

### ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով և 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 2012-Ա որոշումը՝

**որոշում եմ**

1. «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության՝ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի Հիվանդանոցային փողոցի 1/1/1 հասցեում գտնվող 231.8 քառ. մետր մակերեսով անշարժ գույքը և դրա զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.014915 հա մակերեսով հողամասը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին հանձնելու նպատակով ստեղծել գույքի հանձնման հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

| | | |
|---|---|---|
| Նունե Գևորգյան | - | Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ (հանձնաժողովի նախագահ), |
| Նարինե Աթայան | - | Սյունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ, |
| Մարինա Գրիգորյան | - | Սյունիքի մարզպետարանի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ, |
| Լուսինե Վարդանյան | – | «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրեն, |
| Կարինե Մկրտչյան | - | «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ գլխավոր հաշվապահ: |

2. Հանձնաժողովին՝ մինչև 2021 թվականի ապրիլի 30-ը ապահովել նախատեսված գույքի հանձնման աշխատանքների իրականացումը և ներկայացնել տեղեկատվություն:

12/30/2020

X

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Signed by: POGHOSYAN MELIKSET 4108600096

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

**Մ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2020թ. դեկտեմբերի 30
ք. Կապան